

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2024թ. ապրիլի 11-ին, ժամը՝ 11:30-ին Բ.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՅԵՆՈՒՄ, հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2024թ. ապրիլի 10-ին, ժամը՝ 17:00-ին

ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՐԴՊՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. նոյեմբերի 17-ի թիվ 523-Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/	Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/
1	4	S/Ա՝ FIAT BRAVO	ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79	Շարժիչը և փոխանցման տուփը (սպա մոնտաժված է, գտնվում է սրահում), բավարար, թափքը ենթակա է վերանորոգման:	Թող. տարեթիվ՝2008թ., նախկին հ/հ՝ 310 CN 61, ն/հ.ZFA19800004152534, թափքը՝ սեղան	1 267 000	496 038	24 802	12 851	18 000

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ:

• Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 հասցեում, զանգահարելով 043-00-93-43 և 044-77-77-08 հեռախոսահամարներով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-17:00-ն, իսկ շաբաթ օրերին՝ մինչև ժամը 13:00-ն:

Կազմակերպիչը պարտավորված է կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «բռնել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի նախավճար՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (իրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:

- մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ աճուրդի մասնակցության վճար՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (իրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը: Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,

- հայտարարուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը)։

* Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին պրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի պրամադրումը դադարեցվում է աճուրդը սկսելուց անվազն երեսուսու ռուպե առաջ:

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- Աճուրդին կարող են ներկա գրվել դիպորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981

հաշվեհամարին:

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիպորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստավայրեր:

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, պրագելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, պրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակցի իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, սպա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապարիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների կատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:

- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ րոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին։

- **Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով**, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման։ **Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել։**

*** Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվերիրոջ հաշվեհամարին։**

*** Համաձայն Պեդական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. նոյեմբերի 17-ի թիվ 523-Ա հրամանի՝**

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով։

- Առաջին աճուրդի ժամանակ չվճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ` գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 րոկոսի չափով։

- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լուրի (լուրերի) գինը։

- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին։

- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել փրանսպորտային միջոցի պեդական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու փուրքերը։

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լուր (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով։

*** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ գանգահարել՝ 010-52-63-32 , 043-06-07-16 հեռախոսահամարներով։**

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը։

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետք՝ հրապարակային ծանուցման

փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը։

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը։

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությանբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները։

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականափոխոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝ պատժվում է տուգանքով՝ փասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ րևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ փարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք փարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք փարի ժամկետով։

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ փարի ժամկետով։

՝Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով։